

ԿԱՐԶԱԽԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Ես ստացուեց այնպես, որ 1992ի ամառը Արցախի բազարի ազատամարտիկները ստիպուած էին թշնամուն գիշեր Շահումեանն ու Մարտակերտի բազմաթիւ բնակավայրեր: Աղասի վարդերեսեանը մի քանի անգամ դիմեց զինուորական ծառայութեան անցնելու համար. Ճամբայ ինձեներին մերժեցին՝ պատճառաբանելով տարիքը: Ելք գտնուեց. կամաւորական ջոկատի գլուխ անցած՝ Աղասին յայտնուեց Մարտակերտի ռազմաճակատում: Կուում էր ես սրտի ցաւով տեսնում, թէ ինչպէս ունակ, ընկնելով ու տեղի տալով, բողբոսում էին տուն ու տեղ, հող ու հայրենիք եւ հեռանում Արցախից: Խմբագրութեանը հասցէագրած «Ժամն է օրհասական, վաղը ուշ կը լինի...» կոչ - նամակում Աղասին ռազմաճակատից դիմում էր նրանց. «Դու խուսափում ես գէնի վերցնելուց, թաքնում ես քո նոր հանգրուանում, նչպէ՞ս ես նայում կնոջդ, զաւակներիդ, քոյրերիդ աչքերին, երբ այստեղ՝ Մարտակերտի անտառներում ես դաշտերում, արհամարհելով մահը, կուում եմ մի բուն հայորդիներ՝ եկած Երեսանից, Գիւմրիից, Լոռիից, Զանգեզուրից, Զաւախից, Սեւանից, Արարատեան դաշտից եւ այլ տեղերից...»:

Մարտերից մէկում ծանր վիրաւորուած Աղասուն տեղափոխեցին Երեսան: Ապաֆինումը երկար տեւեց: Ամբարը հայրենի Կարգախ գիւղում՝ Զաւախի ամենահեռաւոր բնակավայրում, պէտք է տեղի ունենայ հայ նահատակների յիշատակը յանրժայցնող յուշարձան - կոթողի բացումը, որը Աղասու եւ «Զիւանի» միութեան իր ընկերների 3 տարուան բրտնաջան աշխատանքի արգասիքն է: Անհամբեր ու ոգեւորուած սպասում էր այդ օրուան:

Սակայն Արցախ հայրենիքում նորից հնչեց ռազմի վաղը: Դեռ նոր ապաֆինուած՝ Աղասին իր կամաւորական ջոկատով նորից մարտակերտեան նակատի թէժ բովում էր: Այս անգամ ջոկատին էր միացել նրա համագիւղացին՝ Գառնիկ Աբրահամեանը: Քաջարի երիտասարդը թողեց ընտանիքը, երեք անչափահաս երեխաներին եւ գէնի ձեռին հասաւ կոռի դաշտ... Ազատագրում էին գիւղ գիւղի յետեւից. ոգեւորութիւնը մեծ էր, շուտով կը հասնէն Մարտակերտի մատոյցներին...

Կուում էին կողք - կողքի՝ յաղթանակի անասան հաւատով: Յիշատակուած նամակում Աղասին գրում էր. «Ամէն մէկը ի՛նքն է իր պարտքը տալու հայրենիքին, իր բաժին կոխն անելու հայրենիքի համար: Յանուն մեր նահատակուած ընկերների, յանուն մեր սրբազան հողի՝ ովքեր կարող են գէնի վերցնել՝ եկէ՛ք միացէ՛ք մեզ, տանի մեր կոխը սրբազան, ժամն է օրհասական, վաղը ուշ կը լինի...»:

Ու մի օր էլ, հերթական գործողութիւնը կատարելիս Աղասին, Գառնիկը ու ես երեք արցախցի՝ յանէտ կորակ մոայլ մշուշում, զինակից ընկերներին ժառանգութիւն բողբոսելով յաղթանակի անասան հաւատն ու կամքը:

Ամբարը Կարգախում կը բացուի հայ նահատակների յուշարձանը, որին Աղասին ու Գառնիկը կը մասնակցեն որպէս սուրբ անուններ՝ հարիւրաւոր սրբացուցակների չփակուած անուանացանկում եւ այդ սուրբ անուններից կը նահագայթի Աղասու հաւատոյ հանգանակը. «Եւ դո՛ւ, հայաստանաբնակ հայ եւ դո՛ւ երեսանցի, լաւ իմացիր Ղարաբաղ կոխը միայն դարաբաղցունը չէ, այն կոխն է համայն հայութեան՝ մեր սրբազան հողի եւ հայրենիքի համար»: